Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 11.09.2020թ. թիվ 2011600318 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<<28>> 09 2020թ. 7-13 11995 ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Սմբատ Քոչարյանի ՄԴ/136059-20 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Տ Ի

Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի Ավան-Առինջ 2 Միկրոշրջանի 1/1 շենքի 5 բնակարանի բնակիչ Սմբատ Քոչարյանը դիմումով խնդրել է վերանայել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2011600318 որոշումը ՝ նշելով,որ ավտոմոբիլը կայանված է եղել տաքսի տրանսպորտային միջոցների համար թույլատրելի նշանով առկա կանգառում:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ դիմումատուի փաստարկը չի կարող վարչական ակտը վերանայելու հիմք հանդիսանալ հետևյալ պատճառաբանությամբ. <<Տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հադվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած **տեսանյութն է կամ լուսանկարը,** որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները:

ՀՀ կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը սահմանելու մասին>>28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 84-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ կանգառն արգելվում է **խաչմերուկներում, <u>երթևեկելի մասերի հատման վրա</u>** և հատվող երթևեկելի մասի եզրից 5 մ պակաս վայրում:

Իրավախախտման PIN անհատական ծածկագրի տակ զետեղված տեսանյութի դանդաղեցված և դրվագային ուսումնասիրությունն ակնհայտ է դարձնում այն փաստը, որ դիմումատուին պատկանող տրանսպորտային միջոցը 27.08.2020թ. ժամը 14:14-ին կանգառ է կատարել Երևան քաղաքի Աբովյան-Իսահակյան փողոցների խաչմերուկում՝ 14:14:56-րդ վայրկյանից 14:16:13-րդ վայրկյանը ներառյալ, որի տևողությունը կազմել է 77 վայրկյան:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 39-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 21-րդ և 25-րդ մասերով (միայն կանգառ կատարելու մասով) նախատեսված վարչական իրավախախտումն ունի նվազ նշանակություն այն դեպքում, երբ կանգառը կատարվել է **միայն ուղևորների նստելու կամ իջնելու նպատակով, չի գերազանցել մեկ րոպե ժամանակահատվածը, և դրա հետևանքով երթևեկության մյուս մասնակիցների**

համար խոչընդոտ կամ վթարային իրադրություն առաջացնելու ակնհայտ վտանգ չի ստեղծվել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 11.09.2020թ. թիվ 2011600318 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Սմբատ Քոչարյանին:

Ե.Կարապետյան

Կատարող՝ Տ.Մարգարյան
Հեռ. 060-83-84-02